ՀԱՅ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԱՆԽՈՆՋ ՀԵՏԱԶՈՏՈՂԸ

(Գառնիկ Ստեփանյանի ծննդյան 60-ամյակի առիթով)

Գառնիկ Ստեփանյանն իր 60-ամյա կյանքի կեսից ավելին նվիրել է Հայրենի մշակույթի ուսումնասիրության գործին և բազմաթիվ հմտալի հետազոտություններով լայն ճանաչում գտել թե Հայրենիքում և թե Սփյուռքում։

Ընդարձակ են Գառնիկ Ստեփանյանի գիտական հետաքրքրությունների սահմանները. այն ընդգրկում է հայ հասարակական մտքի, գրականության և թատրոնի պատմության բնագավառները, որոնցից յուրաքանչյուրում ունի իր նշանակալի ավանդը։ Միքայել Նալբանդյանին, Արմենակ Հայկունուն, Հակոբ Պարոնյանին, Արփիար Արփիարյանին, Պետրոս Ագամյանին, Արուսյակ Փափազյանին, Մկրտիչ Ջանանին նվիրված նրա մենագրությունները և ուսումնասիրությունները արժեքավոր ներդրումներ են Հայ նոր գրականության և թատրոնի պատմության գիտական մշակման գործում։ Գ. Ստեփանյանի գրչին է պատկանում «Հայ նոր գրականության պատմության» բազմահատորյակի երկրորդ հատորի ծավալուն ներածությունը («Հայ հասարակական կյանքը, կուլտուրան և գրականությունը XIX դարի 50—60-ական թվականներին»)։

Առանձնակի հիշատակության արժանի է նրա «Ուրվագիծ արևմտահայ թատրոնի պատմության» եռահատոր աշխատությունը, որի առաջին հատորը հրատարակվել է 1962-ին, երկրորդը շուտով լույս կտեսնի, իսկ երրորդը պատրաստվում է տպագրության։ Այս ծանրակշիռ գործը, ինչպես նաև նրա եռահատոր «Կենսագրական բառարանը» (որի առաջին հատորն արդեն տպագրության է հանձնված) իրավամբ կարելի է դասել վերջին տարիների մեր գիտական կյանքի ակնառու երևույթների շարքը։

Գ. Ստեփանյանի առաջաբաններով են լույս տեսել արևմտահայ մի շարք արձակագիրների (Արփիար Արփիարյան, Զապել Եսայան, Տիգրան Կամսարական, Երուխան) երկերի մասսայական հրատարակությունները։

Հատկապես նշանակալի է Գ. Ստեփանյանի գերը Հակոբ Պարոնյանի երկերի գիտական հրատարակության և ուսումնասիրության ասպարեզում։ Նա է հեղինակը մեր մեծագույն երգիծաբանի կյանքին և ստեղծագործությանը նվիրված ծավալուն մենագրության, որի միայն առաջին հատորն է հրատարակվել («Պարոնյանի կյանքը և հրապարակախոսությունը»)։ Գ. Ստեփանյանի գլխավոր խմբագրությամբ է իրականացվում Հակոբ Պարոնյանի երկերի գիտական հրատարակությունը 11 հատորով (լույս են տեսել 1—6 հատորները, 7-րդը տպագրվում է)։ Արգասավոր են եղել Գ. Ստեփանյանի գործունեության տարիները Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտում և՛ գրականության և՛ արվեստի թանգարանում։ Լինելով վերջինիս դիրեկտորը (1954—1963 թթ.), մեր հոգևոր մշակույթի այդ գանձարանը հարստացրեց հայ գրականության և արվեստի պատմության համար կարևորագույն նշանակություն ունեցող մեծաքանակ վավերագրերով և հազվագյուտ հրատարակություններով։

Նույնքան արգյունավետ է եղել Գ. Ստեփանյանի գործունեությունը Հայաստանի գիտությունների ակադեմիայի «Տեղեկագրի» (հաս. գիտություններ) խմբագրությունում, ուր վարել է նախ պատասխանատու քարտուղարի (1948—1952 թթ.) և ապա խմբագրի (1953—1956 թթ.) պաշտոնները։ Ամենուրեք Գ. Ստեփանյանն աչքի է ընկել բացառիկ աշխատասիրությամբ, գիտական բարեխղճությամբ և խանդավառ նվիրվածությամբ՝ հանուն հայ մշակույթի և գիտության զարգացման։

Այդ բարձր հատկանիշները, որոնցով բնութագրվում է Գ. Ստեփանյանն իր ամբողջ գործունեության ընթացքում, լավագույն երաշխիքն են գիտական նոր արժեքների, որ նրանից սպասում է մեր գիտական հասարակայնությունը՝ առաջիկա տասնամյակներին։

Ա. ԻՆՃԻԿՅԱՆ